

# Տ Ե Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի փետրվարի 28-ի «Դատական պրակտիկայի ամփոփում անցկացնելու մասին» թիվ 01Լ որոշման հիման վրա ՀՀ առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարաններում 2006 թվականին ավարտված քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի ամփոփման արդյունքների վերաբերյալ

## **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ գործերով դատական պրակտիկա.**

## **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 178-րդ, 187-րդ, 224-րդ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 11-րդ հոդվածներ.

## **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են 987 քաղաքացիական գործեր.

## **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 11-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկան.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը, նկուղիները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև

մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումները ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականությունը:

Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարող է պատկանել նաև տվյալ կամ այլ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք, ինչպես նաև հողամաս, շարժական, անշարժ կամ ցանկացած այլ գույք:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ շինության սեփականատերերն ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետում, օգտագործում և տնօրինում են սույն օրենքով սահմանված կարգով:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է, որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը, այդ թվում նաև՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մի մասի առանձնացման, դրա օտարման, գրավադրման մասին որոշումների ընդունումը, որպիսիք պետք է ընդունվեն բոլոր սեփականատերերի կողմից միաձայն:

*Օրինակ՝* Ս. Թադևոսյանը դիմել է դատարան ընդդեմ համատիրության՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Դիմելով դատարան դիմումատուն հայտնել է, որ հանդիսանում է թիվ 53 շենքի թիվ 1 բնակարանի սեփականատերը: Սկսած 1973 թվականից նույն շենքի նկուղային տարածքից 73 քմ մակերեսով տարածքը տնօրինում և տիրապետում է որպես սեփական գույք: Նշել է, որ թիվ 53 շենքի սեփականատերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նշված տարածքը որպես սեփականություն անհատույց նվիրվել է իրեն: Դատարանի վճռով հայցը բավարարվել է: Հայցը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով: Սակայն, համաձայն գործում առկա փաստաթղթերի, առկա չէ բազմաբնակարան շենքի համասեփականատերերի մի մասի համաձայնությունը և վերջիններս դատաքննությանը մասնակից չեն դարձվել:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ առկա են քաղաքացիական գործեր, որոնց պահանջը նույնպես վերաբերվում է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչմանը և դատարանի վճռով դիմումը բավարարվել է, սակայն տվյալ գործերով դատարանը վճիռ կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ և 187-րդ հոդվածներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 26-ը հունվարի 2007թ. թիվ 3-9 (Ա) որոշմամբ նույնպես անդրադաձել է սույն իրավահարաբերությունը կարգավորող նորմերի կիրառմանը և առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանել, ուղարկել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ մասնավորապես նշված է. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներն ամրագրում են բազմաբնակարան շենքի բնակարանների և /կամ/ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ շենքը կրող կառուցվածքների, շենքի միջհարկային ծածկերի, նկուղների, ձեղնահարկի, տեխնիկական հարկերի, տանիքի, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերի, աստիճանավանդակների, աստիճանների, վերելակների, վերելակային և այլ հորերի, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումների ու տարածքների նկատմամբ բաժնային սեփականության իրավունքը:

Բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով կարող է պատկանել նաև տվյալ կամ այլ շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք, ինչպես նաև հողամաս, շարժական, անշարժ կամ ցանկացած այլ գույք:

Նշված օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ շինության սեփականատերերն ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետում, օգտագործում և տնօրինում են «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Դատարանը, բավարարելով հայցը, վճռում հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածին՝ նշելով, որ «հայցը հիմնավորված է և ենթակա է բավարարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածով»:

Դատարանի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, ամրագրելով բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի բաժնային սեփականության իրավունքը, չի նախատեսում բազմաբնակարան շենքի համասեփականատերերի մի մասի համաձայնությամբ, չունենալով մյուս բնակիչների համաձայնությունը, նրանց բաժնային սեփականությունից առանձնացնել բաժին և այն սեփականության իրավունքով փոխանցել նույն շենքի բնակիչներից մեկին:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի բնակարանի և (կամ) ոչ բնակելի տարածքի սեփականատերն իրավունք չունի ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասից կամ գույքից առանձին օտարելու, գրավադրելու, օգտագործման հանձնելու բնակարանը և (կամ) ոչ բնակելի տարածքը կամ կատարելու բնակարանի և (կամ) ոչ բնակելի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքն առանձին այլ անձի հանձնելու այլ գործողություններ: Բազմաբնակարան շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի վրա չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի և 197-րդ հոդվածի 2-6-րդ կետերում նախատեսված կանոնները:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է (այսուհետ՝ ժողով), որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը, այդ թվում նաև՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մի մասի առանձնացման, դրա օտարման, գրավադրման մասին որոշումների ընդունումը, որպիսիք պետք է ընդունվեն բոլոր սեփականատերերի կողմից միաձայն:

Սույն գործի փաստերի ուսումնասիրությամբ Վճռաբեկ դատարանը պարզեց, որ սույն գործով դատարանը որպես պատասխանող ներգրավել է վիճելի հասցեն սպասարկող՝ «Բագրատունյաց-13» համատիրությանը, որը սույն գործով որպես

պատշաճ պատասխանող հանդես գալ չի կարող, քանի որ հայցապահանջի առարկան է բազմաբնակարան շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող նկուղի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում: Մասնավորապես, դատարանը դատական նիստին մասնակից չի դարձրել Բագրատունյաց փողոցի 15-րդ բազմաբնակարան շենքի բոլոր սեփականատերերին, որոնք վերը շարադրված հիմնավորումներով հանդիսանում են նշված տարածքի նկատմամբ համասեփականատերեր:

Վիճելի նկուղի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին վճիռ կայացնելով, փաստորեն, դատարանը վճիռ է կայացրել Երևան քաղաքի Բագրատունյաց փողոցի 15-րդ շենքի բնակիչների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված խախտումը հանգեցրել է բողոք բերած անձանց՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:»:

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

*Օրինակ՝* քաղաքացիական գործով քաղաքապետարանը դիմել է դատարան՝ գույքը տիրագուրկ ճանաչելու և այն սեփականության իրավունքով համայնքին հանձնելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ թիվ 1 և թիվ 2 միջնակարգ դպրոցների կից դեռևս խորհրդային իշխանության տարիներին կառուցվել են չորս ավտոտնակներ, որոնք գտնվում են քաղաքի Դպրոցականների փողոցի աջակողմյան հատվածում: Նշել է, որ ավտոտնակները գտնվել են շրջխորհրդի գործկոմի ժողկրթության բաժնի հաշվեկշռում, սկսած 1996թ. շրջխորհրդի գործկոմի ժողկրթության բաժնի լուծարումից հետո նշված ավտոտնակները համարվում են որպես տիրագուրկ անշարժ գույք: Խնդրել է վերը նշված ավտոտնակները ճանաչել տիրագուրկ և այն՝ որպես սեփականություն, հանձնել համայնքին:

Դատարանի 07.06.2006թ. վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ և 187-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-188-րդ հոդվածներով: Քաղաքացիական գործում առկա է թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրենի պատասխանն ուղղված քաղաքապետին, որում նշված է. « ... հայտնում ենք, որ դպրոցի կողմից կառուցված և ավելի քան 20 տարի օգտագործվող ավտոտնակները, որոնք գտնվում են Դպրոցականների փողոցի աջակողմյան հատվածում, ներկայումս չեն գտնվում դպրոցի հաշվեկշռում: Խնդրում ենք Ձեր կարգադրությունը քաղաքաշինության բաժնին՝ անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստելու և այն դպրոցի հաշվեկշիռ մտցնելու համար»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 01-ը օգոստոսի 2007թ. թիվ 3-1229 (ՎԴ) որոշմամբ նույնպես անդրադարձել է սույն իրավահարաբերությունը կարգավորող նորմերի կիրառմանը, որում մասնավորապես նշված է. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելիս էական նշանակություն ունեն ոչ թե գույքի նկատմամբ այլ անձի իրավունքների վերաբերյալ ապացույցները, այլ դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից տասը տարի և ավելի բարեխղճորեն, անընդմեջ ու բացահայտ օգտագործելու և տիրապետելու հանգամանքները»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 10-ը հոկտեմբերի 2007թ. թիվ 3-1435 (ՎԴ) որոշմամբ նույնպես անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի

մեկնաբանությանը, որում մասնավորապես նշված է. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Նույն օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխիղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման

վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն,

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն,

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով:»:

*Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ առկա են նաև գործեր, որոնցով դիմումատուի պահանջը վերաբերվում է շարժական գույքը տիրագուրկ ճանաչելուն և տիրապետող անձի սեփականությանը հանձնելուն, սակայն դատարանը տվյալ դեպքում նույնպես ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով, որը ինչպես արդեն վերը նշվեց, վերաբերվում է ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերմանը:*

*Օրինակ՝* քաղաքացիական գործով դիմումատուն դիմել է դատարան՝ գույքը տիրագուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփականությանը հանձնելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ սահմանամերձ տարածքում հայտնաբերվել է «ՈՒԱԶ» 3303 մակնիշի ումբակոծված, թալանված և շահագործման համար ոչ պիտանի ավտոմեքենա, որը տեղափոխել է իրենց գյուղ, վերանորոգել, դարձրել շահագործման համար պիտանի և մինչ այժմ տիրապետում է որպես սեփական գույք: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ինչպես ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի դրույթներով, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ և 187-րդ հոդվածներով:

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ և 187-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով (հոդված 187):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

*Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ առկա են գործեր, որոնցով դատարանը՝ անշարժ գույքը տիրագուրկ ճանաչելով և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելով՝ հաստատված չի համարել դիմողի կողմից տվյալ գույքը 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետելու հանգամանքը, սակայն ձեռքբերման վաղեմության հիմքով հանձնել է դիմողի սեփականությանը՝ կիրառելով միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածը:*

*Օրինակ՝ քաղաքացիական գործով քաղաքապետարանը դիմելով դատարան հայտնել է, որ դատարանի վճռով անվավեր է ճանաչվել Ֆ. Մազմանյանին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ ավտոտեխսպասարկման կայանի նկատմամբ /իրականում 4 ավտոմեքենայի համար կառուցված ավտոտնակի նկատմամբ/: Ավտոտնակը կառուցվել է ՀՀ նախկին կոմկուսի կենտկոմի պատվերով՝ 1986-1987թթ., սակայն ժամանակին այն ձևակերպում չի ստացել և չի հաշվառվել ներկայիս քաղաքապետարանի հաշվեկշռում: Ավտոտնակը կառուցելուց հետո ծառայել է որպես նախկին կոմկուսի Կամոյի շրջկոմի, հետագայում քաղխորհրդի գործկոմի ավտոմեքենաների հավաքակայան: Քաղաքապետարանը հանդիսանում է նախկին քաղխորհրդի գործկոմի իրավահաջորդը: Խնդրել է ավտոտնակը ճանաչել տիրագուրկ և դրա նկատմամբ ճանաչել քաղաքային համայնքի սեփականության իրավունքը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է. ավտոտնակը ճանաչվել է*

սիրագուրկ և այն սեփականության իրավունքով հանձնվել է քաղաքապետարանին: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով:

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները՝ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, այլ սահմանափակումները, շարժական գույքի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները, ենթակա են /պետք է ներկայացվեն/ պետական գրանցման՝ գործարքների կնքման օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի: Նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ գործարքներից ծագող իրավունքների գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության, նման գործարքը համարվում է առոչինչ:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Ա. Սարգսյանը դիմում է ներկայացրել դատարան՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ Ա. Էրամջյանից գնել է հողամաս, սակայն ընտանեկան խնդիրների պատճառով օրենքով սահմանված ժամկետում իրավունքի պետական գրանցում չի կատարել և բաց է թողել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման՝ օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը: Խնդրել է ճանաչել իր սեփականության իրավունքը վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղ. օր-ի 14-րդ հոդվածով և 172-րդ հոդվածի 2-րդ մասի:

## **1. Ուսումնասիրության ոլորտը**

### **Հողային իրավահարաբերություններից ծագող գործերով դատական պրակտիկա.**

## **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 199-րդ, 342-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածներ.

## **3. Վիճակագրական տվյալներ**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են 195 քաղաքացիական գործեր.

## **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 77-րդ և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները՝ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, այլ սահմանափակումները, շարժական գույքի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները, ենթակա են /պետք է ներկայացվեն/ պետական գրանցման՝ գործարքների կնքման օրվանից սկսած 30-օրյա ժամկետում՝ անշարժ գույքի

կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի: Նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ գործարքներից ծագող իրավունքների գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության, նման գործարքը համարվում է առոչինչ:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Պ. Պողոսյանը դիմել է դատարան՝ իրավունքի պետական գրանցման համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողելը հարգելի համարելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ նոտարական վավերացմամբ առուվաճառքի պայմանագրով գնել է վարելահող, սակայն ժամանակավորապես ՀՀ-ից բացակայելու և ուշ վերադառնալու հետևանքով չի կարողացել սահմանված 30-օրյա ժամկետում գրանցել պայմանագրից ծագող իրավունքները: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետով:

Դատական պրակտիկայում առկա են գործեր, որոնցով հայցապահանջները նույնպես վերաբերում են նյութական իրավունքի նորմերով սահմանված ժամկետների բացթողումը վերականգնելուն, սակայն դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով /հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը/՝ նույնպես վճիռ է կայացրել հայցապահանջը բավարարելու մասին:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Լ. Շահինյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի՝ անշարժ գույքի պետական գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և վերականգնելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ 07.06.2006թ. օրինական կարգով գնել է բնակարան, սակայն հիվանդ լինելու պատճառով պայմանագիրը պետական գրանցման չի ենթարկել, և երբ դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման խնդրանքով, մերժվել է՝ գույքի պետական գրանցման համար օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը բաց թողնելու պատճառով: Դատարանի վճռով հայցը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածներով /հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը/:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 02-ը մարտի 2007թ. 3-1862 (Ա) որոշմամբ նույնպես անդրադաձել է նյութական իրավունքի նորմերով սահմանված ժամկետների բացթողումը վերականգնելը կարգավորող նորմերի կիրառմանը, որում

մասնավորապես նշված է. «... Վճռաբեկ դատարանը հարկ է համարում սույն վեճի շրջանակներում արձանագրել, որ նյութական իրավունքի նորմերով սահմանված ժամկետների բացթողումը կարող է վերականգնվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Տվյալ դեպքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման համար սահմանված 30-օրյա ժամկետի վերականգնման դեպք որևէ օրենքով նախատեսված չէ:»:

Բացի վերոնշյալ որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանն իր 02-ը մարտի 2007թ. 3-370(Ա) որոշմամբ նույնպես անդրադաձել է սույն իրավահարաբերությունը կարգավորող նորմերի կիրառմանը:

### **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերով դատական պրակտիկա.**

### **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երկրորդ ենթաբաժնի 34-րդ գլուխ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշում.

### **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է ըստ էության քննված և ավարտված թվով 3793 քաղաքացիական գործեր, ինչը կազմում է ՀՀ առաջին ատյանի դատարաններում ըստ էության քննված և ավարտված քաղաքացիական գործերի 8,64 %-ը: Հիշյալ 3793 քաղաքացիական գործերից բավարարվել են 3577-ը, մերժվել՝ 216-ը: Թվով 76 քաղաքացիական գործի վարույթ կարճվել է, 288-ը՝ թողնվել է առանց քննության.

### **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածների և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 1-ին կետի կիրառման դատական պրակտիկան.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումում պետք է նշվի, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթերը ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

Նույն օրենսգրքի 192-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-190-րդ հոդվածների համաձայն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ քաղաքացիների և իրավաբանական անձանց դիմումները դատարանների կողմից քննության են առնվում, եթե դրանք առաջացնում են իրավական հետևանքներ և եթե դիմողները հնարավորություն չունեն արտադատարանական կարգով ստանալու կամ վերականգնելու այդպիսի փաստերը հաստատող փաստաթղթերը:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Խ. Պողոսյանը դիմել է դատարան՝ ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ փաստացի տիրապետմամբ ընդունել է իր հանգուցյալ պապին պատկանող բնակարանը: Դատարանին խնդրել է հաստատել նշված բնակարանն իր կողմից փաստացի տիրապետմամբ, որպես ժառանգական գույք ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը: Գործում առկա չէ նոտարի՝ ժառանգության իրավունքի վկայական տալու մասին գրավոր մերժումը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է:

Վերոնշյալ իրավահարաբերության կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր 02-ը մարտի 2007թ. թիվ 3-332(Ա) որոշմամբ, որում մասնավորապես նշված է. «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ հատուկ վարույթի գործերն այն գործերն են, որոնք ուղղված են անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելուն: Այդ իսկ պատճառով օրենսդիրը նշված գլխում սահմանել է, որ դիմումում պետք է նշվի, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև պետք է բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ (հոդված 191): Նշված նորմով օրենսդիրը դիմողների համար սահմանել է պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը դատարանին ապացուցելու իրական և պարտադիր պահանջ»:

*Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ հարուցված քաղաքացիական գործերի ճնշող մեծամասնությամբ դիմողների կողմից պահպանվել է գործի քննության արտադատական կարգը:*

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Ա. Գասպարյանը դիմում է ներկայացրել դատարան իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուն հայտնել է, որ Սուվորով փողոցի 66 տունը երկհարկանի շինություն է, այն պատկանել է իր հորը, որը զոհվել է հայրենական պատերազմում: Նրա մահից հետո բացվել է ժառանգություն, որի 2/3 մասի նկատմամբ ժառանգորդ է ճանաչվել դիմումատուի մայրը՝ Լ. Գասպարյանը: Իր ծննդյան օրվանից ինքն իր մոր՝ Լ. Գասպարյանի հետ համատեղ բնակվել են վերը նշված տանը: 1993թ. մոր մահից հետո շարունակել է բնակվել նույն տանը՝ փաստացի տիրապետելով ժառանգատուի ժառանգական գույքը: Դիմելով դատարան՝

դիմումատուն խնդրել է հաստատել իր կողմից ժառանգության ընդունման իրավաբանական նշանակություն ունեցող փաստը:

Մ. Գասպարյանը, որը հանդիսանում է Լ.Գասպարյանի թոռը, 08.02.2006թ. դիմում է ներկայացրել դատարան, որով խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն իրեն ներգրավել որպես պատասխանող, քանի որ ինքը տիրապետող ժառանգ է վեճի առարկա հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ: Մ.Գասպարյանի կողմից նաև դատարան է ներկայացվել հակընդդեմ հայցադիմում, որը դատարանի 13.03.2003թ. որոշմամբ ընդունվել է վարույթ: Ա. Գասպարյանի կողմից 24.03.2006թ. դատարան է ներկայացվել հակընդդեմ հայցի պատասխան, որով խնդրել է իրեն ճանաչել իր բաժնեմասի նկատմամբ փաստացի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Դատարանի 15.05.2006թ. որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին: Որոշում կայացնելիս դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին կետով՝ այսինքն, դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված հայցվորի չներկայանալու պատճառաբանությամբ:

Նման փաստ առկա է նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական պրակտիկայում:

*Օրինակ՝* Ռ. Գրիգորյանը դիմելով դատարան խնդրել է հաստատել անհատական իրավական ակտի ուժի մեջ համարվելու և իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը:

Առաջին ատյանի դատարանի 18.11.2005թ. վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի քաղաքապետի վերաքննիչ բողոքի հիման վրա, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 02.03.2006թ. վճռով դիմումը բավարարվել է:

Ընդ որում, Երևանի քաղաքապետի ներկայացուցիչը առարկել է դիմումի դեմ և հայտնել է, որ վիճարկվող ակտը չի վերաբերում դիմողին:

*Բացի վերը նշվածը, դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ առկա են գործեր, որոնցով դիմումը դատարան ներկայացնելիս դիմումի հիմքում ընկած ապացույցներից ակնհայտ է եղել իրավունքի մասին վեճը:*

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Հ. Ասատրյանը դիմել է դատարան՝ ժառանգությունն ընդունելու փաստը հաստատելու պահանջով: Դատարանի վճռով

դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ կետով: Գործում առկա՝ դիմումատուի կողմից դատարան ներկայացված նոտարական գործողությունները կատարելու մասին նոտարի մերժման որոշման մեջ նշված է, որ նոտարական գործողության կատարումը մերժվում է, քանի որ ժառանգների միջև կա վեճ:

Վերոնշյալ իրավահարաբերության կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր 02-ը մարտի 2007թ. թիվ 3-445(Ա) որոշմամբ, որում մասնավորապես նշված է. «Ի նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի միասնական կիրառման ապահովման անհրաժեշտությունը, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում սույն որոշմամբ անդրադառնալ նշված նորմով սահմանված «վեճ է ծագել իրավունքի մասին» հասկացության իրավաբանական բովանդակությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին հատուկ վարույթի կարգով քննվող գործերն այն գործերն են, որտեղ պետք է բացակայի նյութաիրավական վեճը: Հատուկ վարույթի հիմնական տարբերությունը հայցային վարույթից կայանում է հենց իրավունքի մասին վեճի բացակայության մեջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունը ստուգելիս դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա:

Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ:

Դատարանը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից:»:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 2-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են անձանց ազգակցական հարաբերություններին:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիների միջև ազգակցական կապը հաստատվում է, եթե ՔԿԱԳ մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթերը չեն պահպանվում և անհնար է դրանց վերականգնումը արտադատարանական կարգով: Տվյալ դեպքում դիմումատուն պարտավոր է դատարան ներկայացնել ՔԿԱԳ-ի եզրակացությունը՝ կորած գրանցման վերականգնման անհնարիության մասին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու /հայրության/ փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Մ. Մարգարյանը դիմելով դատարան՝ հայտնել է, որ 1991թ. ամուսնացել է Յու. Մարգարյանի հետ, սակայն ամուսնությունը ՔԿԱԳ մարմիններում չի գրանցվել: Համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Անժելա Մարգարյանը՝ ծնված 12.07.1992թ., Արմինե Մարգարյանը՝ ծնված 05.11.1996թ.: Երեխաների ծնվելու ժամանակ հայրը բացակայել է ՀՀ-ից, ուստի և նրա կողմից երեխաների հայրությունը չի ճանաչվել: Յու. Մարգարյանը մահացել է և երեխաների փաստաթղթերը կարգավորելու նպատակով խնդրել է հաստատել հանգուցյալ Յու. Մարգարյանի՝ իր դստերի հարազատ հայրը լինելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է, հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Յու.

Մարգարյանը հանդիսացել է Անժելա Մարգարյանի և Արմինե Մարգարյանի հարազատ հայրը: Դիմումը բավարարելիս դատարանը գտել է, որ դիմումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներից:

*Մեկ այլ* քաղաքացիական գործով Ե. Ավագյանը դիմել է դատարան՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով: Դիմելով դատարան դիմումատուն հայտնել է, որ Յ. Ամիրյանը իր մայրն է, որը մահացել է, ամուսնությունից հետո կրել է հոր ազգանունը: Նշել է, որ մոր մահվան վկայականում և ծննդյան վկայականում նշված ազգանունները չեն համընկնում: Խնդրել է հաստատել իր և մոր միջև ազգակցական կապը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 4-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝ ծննդյան, որդեգրման /դատերագրման/, ամուսնության, ապահարզանի և մահվան գրանցմանը:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 4-րդ կետի համաձայն՝ դատարանները ծննդյան, որդեգրման, ապահարզանի, մահվան գրանցումների վերաբերյալ իրավաբանական փաստերը հաստատում են, եթե ՔԿԱԳ-ի մարմիններում չեն պահպանվել համապատասխան գրանցումները և դրանց վերականգնումը վերջիններիս կողմից մերժվել է: Սույն որոշման մեջ նշվել է նաև, որ հաճախ դատարանները ամուսնության և ծննդյան գրանցման փաստը հաստատելու փոխարեն հաստատում են ամուսնության և ծննդյան փաստը:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Պ. Սարգսյանը դիմելով դատարան՝ խնդրել է հաստատել իր և Ն. Նիկոլյանի միջև ամուսնության գրանցման փաստը: Դիմողը հայտնել է, որ իրենց ամուսնությունը ՔԿԱԳ բաժնում չի գրանցվել: Ն. Նիկոլյանը մահացել է 07.01.1999թ.: Ներկայումս չի կարողանում ընդունել ամուսնու

ժառանգությունը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է, հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ն. Նիկոլյանը հանդիսացել է Պ. Սարգսյանի ամուսինը: Դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետերով:

Նման փաստ առկա է նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական պրակտիկայում:

*Օրինակ՝* Ա. Սարգսյանը, դիմելով դատարան, հայտնել է, որ ինքը Հ. Սարգսյանի հետ ՔԿԱԳ մարմնում գրանցված ամուսնության մեջ է 1989թ-ից: Ամուսնական կյանքի ընթացքում՝ 26.10.2006թ., ծննդաբերել է տղա երեխա, որի ծնունդը չի գրանցվել ՔԿԱԳ մարմնում: Ներկայումս ցանկանում է գրանցել երեխայի ծնունդը և ստանալ ծննդյան վկայական, սակայն ՔԿԱԳ գործակալությունը մերժել է իր խնդրանքը: Խնդրել է հաստատել 26.10.2003թ. ծնված Սամվել Հովհաննեսի Սարգսյանի ծննդյան փաստը: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 18.09.2006թ. վճռով դիմումը բավարարվել է, հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ազնիվ Սարգսյանը 26.10.2003թ. Վանաձոր քաղաքում ծննդաբերել է մեկ տղա երեխա:

Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 7-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝ ծննդյան, որդեգրման /դստերագրման/, ամուսնության, ապահարգանի և մահվան գրանցմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահվանը, եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները մերժում են մահվան գրանցումը:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 7-րդ կետի համաձայն՝ անձանց որոշակի հանգամանքներում մահվան փաստը դատարանները հաստատում են, եթե ՔԿԱԳ-ի մարմինները հրաժարվում են կատարելու նման փաստի գրանցում: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի՝ տվյալ դեպքում դատարաններն իրավասու են հաստատել որոշակի հանգամանքներում և որոշակի պայմաններում անձի մահը: Դատարանի վճռի հիման վրա ՔԿԱԳ-ի մարմինները գրանցում են մահվան փաստը:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Վ. Համբարձումյանի ներկայացուցիչ Հ. Քարամյանը դիմել է դատարան իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով: Դիմելով դատարան՝ դիմումատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Վ. Համբարձումյանը ծնվել է 1989թ., հայրը հանդիսանում է Հ. Համբարձումյանը, իսկ մայրը՝ Ա. Փամփուխչյանը, որոնք օրինական ամուսիններ են եղել, սակայն դատարանի վճռով 2003թ. ամուսնալուծվել են: Նշել է, որ դիմումատուի հայրը 1993թ. ապրել է ԱՄՆ-ում, սակայն 2005թ., երբ վերադարձել է ԱՄՆ-ից, մահացել է: Դիմումատուի հոր մահվան գրանցում չի կատարվել: Խնդրել է հաստատել Հ. Համբարձումյանի մահվան փաստը, որպեսզի դիմումատուն կարողանա ընդունել հոր կողմից թողնված ժառանգությունը:

Դատարանի 15.03.2006թ. վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 5-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝ իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությանը, բացառությամբ անձնագրի և զինվորական փաստաթղթերի:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 5-րդ կետի համաձայն՝ իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության մասին փաստերի հաստատման վերաբերյալ դիմումներ ընդունելիս, դատարանները

պարտավոր են դիմողից պահանջել ապացույցներ այն մասին, որ այդպիսի փաստաթղթերը պատկանում են իրեն և որ դրանք տվող կազմակերպությունն ի վիճակի չէ ուղղելու դրանցում եղած սխալները: Դատարանները հաստատում են տվյալ փաստաթղթի պատկանելությունը կոնկրետ անձին, եթե ներկայացված փաստաթղթի մեջ կա անվան ազգանվան կամ հայրանվան տարբերություն: Դատարանը պետք է հաստատի ոչ թե սխալ գրանցված անձի և դատարան դիմած անձի նույն անձը լինելը, այլ փաստաթղթերից մեկը նրան պատկանելու փաստը:

*Օրինակ՝* Ռոզա Պողոսյանը /Հարությունյան/ դիմելով դատարան հայտնել է, որ իր ծննդյան վկայականում և անձնագրում իր անուն, հայրանուն, ազգանունը նշված է Ռոզա Բարսեղի Հարությունյան: 1956թ. ամուսնացել է Ա. Պողոսյանի հետ, ամուսնությունից հետո ընդունել է ամուսնու ազգանունը, սակայն չի նկատել, որ ամուսնության վկայականում իր անունը գրվել է Քնարիկ: Խնդրել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ռոզա Պողոսյանը և Քնարիկ Պողոսյանը նույն անձն են, որպեսզի ստանա ամուսնու ժառանգությունը: Դատարանի 14.08.2006թ. վճռով դիմումը բավարարվել է: Հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ Ռոզա Բարսեղի Պողոսյանը /Հարությունյան/ նույն ինքը՝ Քնարիկ Բարսեղի Պողոսյանն /Հարությունյանն/ է: Դատարանը գտել է, որ դիմումը պետք է բավարարվի համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի:

*Օրինակ՝* Ն. Ստեփանյանը դիմելով դատարան խնդրել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, որոնք վերաբերվում են իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիությանը, այդ թվում նաև այն, որ Ս. Ստեփանյանին տրված անձնագիրը պատկանում է նույն անձին Ն. Ստեփանյանին: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դատարանը հանգել է այն համոզման, որ առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ հաստատելու իրավաբանական նշանակություն ունեցող, իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելիության փաստը:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 6-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 6-րդ կետի համաձայն՝ սեփականության իրավունքով /գույքի, շենքերի, շինությունների և այլն/ տիրապետման փաստը հաստատվում է, եթե սեփականության իրավունքով տիրապետելու վերաբերյալ փաստաթղթեր նախկինում եղել են, սակայն հետագայում դրանք կորել են կամ ոչնչացել և հնարավոր չէ դրանք վերականգնել, հակառակ դեպքում նման վեճերը ենթակա են լուծման վարույթի կարգով:

*Օրինակ՝* Ա. Ներսիսյանը դիմելով դատարան հայտնել է, որ 28.04.2006թ. Ա. և Ե. Ներսիսյանների և իր միջև նոտարական վավերացմամբ կնքվել է նվիրատվության պայմանագիր, համաձայն որի Ա. և Ե. Ներսիսյանները սեփականության իրավունքով իրենց պատկանող 246,7 քմ մակերեսով բնակելի տունը, 58 քմ կից շինությունները, 0.15 հա տնամերձը և 0.41 հա հողամասը նվիրել են իրեն: Սակայն 30-օրյա ժամկետում պայմանագիրը չի գրանցել կադաստրում, իսկ Ա. և Ե. Ներսիսյանները բացակայում են ՀՀ-ից: Դիմել է անշարժ գույքի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքը գրանցելու, սակայն ստացել է մերժում 30-օրյա ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ: Խնդրել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ ինքը սեփականության իրավունքով տիրապետում է 246,7 քմ մակերեսով բնակելի տունը, 58 քմ կից շինությունները, 0.15 հա տնամերձը և 0.41 հա հողամասը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ ենթակետով:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 8-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000թ. թիվ 39 որոշման 8-րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով դատարանները կարող են քննության առնել նաև իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստերի հաստատման վերաբերյալ գործեր, որոնք նախատեսված չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ կետով: Դատարանները պետք է նկատի ունենան, որ այս դեպքում խոսքը վերաբերվում է ոչ թե ցանկացած փաստի, այլ միայն այնպիսի փաստերի, որոնց դատական հաստատումը նախատեսված է այլ օրենքներով:

*Օրինակ՝* Խ. Սարուխանյանը դիմել է դատարան իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով: Դիմելով դատարան դիմումատուն հայտնել է, որ 25.12.05թ. գնել է 1995թ. արտադրության ՎԱԶ 21099 մակնիշի ավտոմեքենա: Շահագործման ընթացքում փոխել է մեքենայի շարժիչը և տեղադրել է առանց համարի շարժիչ: Դատարանին խնդրել է հաստատել իր կողմից ավտոմեքենայի շարժիչի փոփոխման և առանց համարի շարժիչ տեղադրելու փաստը: Դատարանի վճռով դիմումը բավարարվել է: Դիմումը բավարարելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-192-րդ հոդվածներով:

### **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Աշխատանքից ազատելու կամ աշխատանքում վերականգնելու վերաբերյալ գործերով դատական պրակտիկա.**

### **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ, 113-րդ և 115-րդ հոդվածներ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999թ. մարտի 27-ի թիվ 8 որոշում.

### **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են 207 քաղաքացիական գործեր, որոնցից 144 քաղաքացիական գործեր քննվել և ավարտվել են վճռի կայացմամբ, դրանցից 79-ով հայցապահանջները բավարարվել են, 65-ով՝ մերժվել:

Թվով 23 քաղաքացիական գործի վարույթ կարճվել է, 40-ը՝ թողնվել է առանց քննության:

#### **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

**«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի կրառման դատական պրակտիկան.**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետը սահմանում է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով հայցվորը դիմել է դատարան աշխատանքում վերականգնվելու պահանջով: Դատարանի վճռով հայցադիմումը մերժվել է: Հայցադիմումը մերժելիս դատարանն անրադարձել է նաև պետական տուրքին՝ վճռելով հայցվորից հոգուտ պետական բյուջեի գանձել պետական տուրք: Միաժամանակ, վճիռը պետական տուրքի մասով ուղարկվել է հարկադիր կատարման:

**ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999թ. մարտի 27-ի թիվ 8 որոշման 13-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999թ. մարտի 27-ի թիվ 8 որոշման 13-րդ կետի համաձայն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ուժով դատական գործերով պետական տուրքի գանձումն ապահովելու պարտականությունը կրում են դատարանները, հետևաբար դատարանի կողմից հետաձգված, տարաժամկետած պետական տուրքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը դատարանն ուղարկում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով հայցվորը դիմել է դատարան աշխատանքում վերականգնվելու պահանջով: Դատարանի վճռով հայցադիմումը բավարարվել է: Դատարանը վճռել է պետական տուրքը բռնագանձել պատասխանողից, սակայն պետական տուրքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն չի ուղարկվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի, 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի, 115-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման դատական պրակտիկան.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն /առանց մրցույթի կամ այլ ընթացակարգի/ համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը:

Դատարաններն աշխատանքում վերականգնելու վերաբերյալ վեճեր քննելիս տարբեր կերպ են մեկնաբանել նույն փաստական հանգամանքներն այն առումով, որ

մի դեպքում գործատուի կողմից ներկայացրած որոշակի փաստաթղթեր, որոնցով հայտնվել է այն մասին, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք գոյություն չունի, դիտել են որպես կարևոր ապացույցներ, մեկ այլ դեպքում, նույն փաստաթղթերը չեն դիտել որպես ապացույց:

*Օրինակ՝* պատասխանողը վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարանի վճռի դեմ, որով բավարարվել է հայցվորի պահանջը՝ աշխատանքում վերականգնելու պահանջի մասին:

Բողոք բերող կողմը հայտնել է, որ պատասխանողն աշխատանքից ազատվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանմանը, այն է՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կրճատման արդյունքով: Հայտնել է նաև, որ գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաև, որ հայցվորին աշխատանքից ազատելիս գործատուն չի պահպանել երկամսյա ծանուցման ժամկետը, որի համար ծանուցման ժամկետանց 58 օրվա համար հայցվորին է վճարել համապատասխան գումար:

Դատարանի վճռով հայցը բավարարվել է: Հայցը բավարարելիս դատարանը վճռի պատճառաբանական մասում հանգել է այն եզրակացության, որ պատասխանողի կողմից հայցվորին այլ աշխատանք չի առաջարկվել և պատասխանողի ներկայացուցիչը դատարանին չի ներկայացրել ապացույց այն մասին, որ գործատուի մոտ բացակայել են հայցվորին այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Միաժամանակ դատարանն անդրադարձել է այն հանգամանքին, որ հայցվորը դատաքննության ընթացքում ներկայացրել է պատասխանող կազմակերպությունում թափուր աշխատատեղերի ներքին հայտարարություններ, որով հայտարարվել է ներքին մրցույթ թափուր պաշտոնները համալրելու համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գործի նյութերում առկա՝ մարդկային ռեսուրսների տնօրենի ժ/պ-ի կողմից տրված տեղեկանքի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում չի

ունեցել հայցվորին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան Ընկերությունում այլ աշխատանք առաջարկելու հնարավորություն: Սակայն դատարանը վճիռ կայացնելիս ընդհանրապես չի անդրադարձել նշված տեղեկանքին, ավելին՝ արձանագրել է, որ պատասխանողի ներկայացուցիչը դատարանին չի ներկայացրել ապացույց այն մասին, որ գործատուի մոտ բացակայել են հայցվորին այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ հայցվորի կողմից ներկայացված՝ պատասխանող կազմակերպությունում թափուր աշխատատեղերի ներքին հայտարարությունը, որով հայտարարվել է ներքին մրցույթ թափուր պաշտոնները համալրելու համար, դեռևս չէր կարող հիմք հանդիսանալ հայցվորին այլ աշխատանք առաջարկելու համար, քանի որ հիմնավորված չէ այն հանգամանքը, որ այդ աշխատանքները համապատասխանել են հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ նմանատիպ մեկ այլ քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարանի վճռի դեմ, որով մերժվել է հայցվորի հայցն ընդդեմ «Արմենտել» ՓԲԸ-ի՝ աշխատանքում վերականգնվելու պահանջի մասին:

Դատարանի վճռով հայցը մերժվել է: Սույն գործով վճիռ կայացնելիս դատարանը անդրադարձել է մարդկային ռեսուրսների գլխավոր տնօրինության կողմից ներկայացված տեղեկանքին, որով հայտնվել է, որ տվյալ պահին գործատուի մոտ հայցվորի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան աշխատանք առաջարկելու հնարավորություն չի եղել: Իսկ ինչ վերաբերում է հայցվորի այն պնդմանը, որ իրեն աշխատանքից ազատելով ընդունել են նոր աշխատակիցների, ինչպես նաև թափուր պաշտոնների վերաբերյալ տեղեկություններ են ձեռք բերվել գործատուի ինտերնետային կայքից՝ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել:

Միաժամանակ, դատարանը վճռի պատճառաբանական մասում անդրադառնալով ծանուցման ժամկետը գործատուի կողմից չպահպանելու փաստին՝ նշել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորին վճարել է տուժանք՝ ծանուցման ժամկետանց 57 օրվա համար,

իսկ երկամսյա ժամկետը չպահպանելու դեպքում այլ հետևանք, քան այդ ժամկետի համար որոշակի տուժանք վճարելը, չի նախատեսվում:

Վերոգրյալից բացի, դատարանը կիրառել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որը մեկնաբանել է հետևյալ կերպ՝ գործատուի իրավունքն է ինքնուրույն ուղղակիորեն համալրել թափուր և նոր ստեղծված աշխատատեղերը, անկախ այն հանգամանքից՝ դրան նախորդել է աշխատողների կրճատում, թե՛ ոչ, եղել է դա աշխատողների թվաքանակի կրճատման ժամանակահատվածում, թե՛ ոչ:

Նմանատիպ մեկ այլ քաղաքացիական գործով պատասխանող «ԱրմենՏել» ՓԲԸ ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարանի վճռի դեմ, որով բավարարվել է հայցվորի հայցն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու և նախկին աշխատանքում վերականգնելու պահանջի մասին:

Դատարանի վճռով հայցը բավարարվել է, բավարարման հիմքում դնելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ներկայացվել է անաշխատունակության թերթիկ, որի ուժով վերջինս գտնվել է անաշխատունակության մեջ, որի համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը լուծել չէր կարելի:

Միաժամանակ վճռի պատճառաբանական մասում դատարանը հանգել է այն հետևության, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածը սահմանում է, որ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, մինչդեռ հայցվորը ծանուցվել է աշխատանքից ազատվելուց երկու օր առաջ:

Ուշագրավ է նաև դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ աշխատանքից ազատելու հրամանի հիմքում դնելով աշխատողների թվաքանակի կրճատումը՝ պատասխանող ընկերությունը միևնույն ժամանակ հայտարարություն է զետեղել «ԱրմենՏել»-ի ինտերնետային կայքում, թափուր աշխատատեղերի մասին, հայցվորին չառաջարկելով համապատասխան աշխատանք, մինչդեռ մեկ այլ նմանատիպ գործով դատարանը նշված հանգամանքին ընդհանրապես չէր անդրադարձել:

Նմանատիպ մեկ այլ քաղաքացիական գործով հայցվորը վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարանի վճռի դեմ, որով Ա. Պողոսյանի հայցն ընդդեմ «Հայջրմուղկոյուղի» և «Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների՝ աշխատանքում վերականգնվելու և աշխատավարձի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է մասամբ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հայցվորի կողմից վերաքննիչ բողոքի լրացման մեջ նշված է, որ կրճատումների մասին պատասխանողը նախատեսված ժամկետում տեղյակ չի պահել:

Դատարանի վճռով հայցը բավարարվել է մասնակի: Բավարարվել է աշխատավարձի բռնագանձման պահանջը, իսկ աշխատանքում վերականգնվելը՝ մերժվել:

Դատարանը վճիռ կայացնելիս չի անդրադարձել ծանուցման խախտված երկամսյա ժամկետին և դրա հետևանքով կիրառման ենթակա տույժին, մինչդեռ նմանատիպ մեկ այլ քաղաքացիական գործով դատարանը հանգել էր այն հետևության, որ ժամկետները չպահպանելը չի կարող այլ բան առաջացնել, քան համապատասխան տույժի գանձում՝ հոգուտ աշխատանքից կրճատված անձի, իսկ մեկ այլ նմանատիպ քաղաքացիական գործով դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի կանոնների չպահպանելը գնահատել է որպես խախտում՝ ընդհանրապես չանդրադառնալով դրա հետևանքով առաջացող տույժին:

Վերոհիշյալ հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որն իր 26.01.2007թ. թիվ 3-34/ՎԴ/-2007թ. որոշմամբ անդրադարձել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և նույն հոդվածի 3-րդ մասի կիրառմանը:

Վերոհիշյալ որոշմամբ վճռաբեկ դատարանը գտել է, որ որոշելու համար, թե դատավարության որ կողմի վրա է ընկնում «Ընկերությունում» համապատասխան այլ աշխատանքի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը, վճռաբեկ դատարանը հանգել է այն հանգման, որ գործատուն կրում է անուղղակի ապացուցման պարտականությունն աշխատողի հանդեպ՝ նրան արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելիս ապացուցելու, որ իր մոտ բացակայում է նրա

մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ անդրադարձել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործատուի պարտականության չկատարման միակ իրավական հետևանքը կարող է հանդիսանալ միայն նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված տուժանքի վճարումը, և այն չի կարող հանգեցնել աշխատանքային պայմանագրի լուծման կապակցությամբ ընդունված իրավական ակտի անվավերության:

### **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Վճարման կարգադրության վարույթներով դատական պրակտիկա.**

### **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36<sup>1</sup> գլուխ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ.

### **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է 24757 վճարման կարգադրության վարույթներ.

### **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 8.1 կետի կիրառման դատական պրակտիկան.

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա

փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 8.1 կետը սահմանում է, որ այն դեպքում, երբ վճարման կարգադրությունը գրասենյակ է վերադարձվում պատասխանողի չգտնվելու կամ հասցեի սխալ լինելու պատճառաբանությամբ, ապա դատավորի օգնականը մեկ օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է դիմողին այդ մասին և խնդրում հնարավոր սեղմ ժամկետում դատարան ներկայացնել կողմի ճշգրտված հասցեն:

*Օրինակ՝* դատարանը 27.02.2006թ. վճարման կարգադրություն է արձակել, նույն օրը պատասխանողը ծանուցվել է, սակայն ծանուցագիրը վերադարձվել է՝ նշումով, որ պատասխանողը ընտանիքով բացակայում է ՀՀ-ից: Դատարանը 31.03.2006թ. գրություն է ուղարկել դիմումատուին՝ խնդրելով ճշտել պատասխանողի ճիշտ հասցեն և հայտնել դատարանին: Դատարանը, դիմումատուի կողմից չստանալով որևէ պատասխան, 05.06.2006թ. կրկին գրություն է ուղարկել դիմումատուին՝ նշումով, որ դատարանին չի հայտնվել պատասխանողի բնակության ճիշտ հասցեն և վճարման կարգադրությունն օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ չի ստացել:

Սակայն, մեկ այլ վճարման կարգադրության վարույթով պատասխանողին ուղարկված ծանուցագիրը հետ ստանալուց հետո */սխալ հասցե լինելու պատճառով/* դատարանը գրություն է ուղարկել դիմումատուին, որով խնդրել է ճշտել պատասխանողի հասցեն և հայտնել դատարանին՝ առանց ժամկետ սահմանելու, և դիմումատուի կողմից չստանալով որևէ պատասխան */սպասելով մոտ երկու ամիս/* դատարանը կրկին անգամ գրություն է ուղարկել դիմումատուին նույն խնդրանքով՝ արդեն պատասխանողի բնակության հասցեն ճշտելու համար *սահմանելով 1 /մեկ/ շաբաթյա ժամկետ:*

Որոշ վճարման կարգադրության վարույթներով պատասխանողին ուղարկված ծանուցագիրը հետ ստանալուց հետո */սխալ հասցե լինելու պատճառով/* դատարանը գրություն է ուղարկել դիմումատուին, որով խնդրել է ճշտել պատասխանողի հասցեն և հայտնել դատարանին՝ առանց ժամկետ սահմանելու, սակայն, դիմումատուի կողմից չստանալով որևէ պատասխան, */սպասելով մոտ 3 /երեք/ ամիս/* դատարանը կրկին անգամ գրություն է ուղարկել դիմումատուին նույն խնդրանքով՝ արդեն պատասխանողի բնակության հասցեն ճշտելու համար *սահմանելով 10-օրյա ժամկետ:*

Մեկ այլ վճարման կարգադրության վարույթով 27.11.2006թ. դատարանը վճարման կարգադրություն է արձակել: Դատարանի կողմից պատասխանողը պատշաճ ծանուցվել է, սակայն ծանուցագիրը 01.12.2006թ. վերադարձվել է, նշումով, որ պատասխանողը տեղափոխվել է: 20.12.2006թ. դատարանը դիմումատուին ծանուցել է այն մասին, որ պատասխանողին ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է՝ պատասխանողի հասցեն սխալ լինելու պատճառով և նշել է, քանի որ պատասխանողը վճարման կարգադրության հանձնման հավաստագիրը չի ստացել, ուստի սույն վճարման կարգադրությունն օրինական ուժի մեջ չի մտել և այն թողնվում է անհետևանք:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>6</sup>-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 8-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վճարման կարգադրությունը պատասխանողին ուղարկվում է փոստով՝ ստացման մասին հետադարձ ծանուցմամբ (տեղեկացմամբ):

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 8-րդ կետի համաձայն՝ վճարման կարգադրությունը, դիմումը և դրան կից փաստաթղթերն առաքվում են դատավորի օգնականի գրության հիման վրա՝ գրասենյակի կողմից փոստին հանձնելու միջոցով: Գրասենյակը փոստով առաքումը կատարում է հանձման մասին ծանուցմամբ կամ, եթե հնարավոր է դրա առձեռն առաքումը, ապա այն հանձնվում է հանձման մասին ստացողի կողմից այդ մասին նշում կատարելու /ստորագրելու/ միջոցով:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ մի շարք վճարման կարգադրության վարույթներով դատարանը պատասխանողին ծանուցել է պատվիրված նամակի միջոցով, որի վրա ընդամենն առկա է փոստին հանձնման կնիքը, որն էլ այդ օրը դատարանը համարել է պատասխանողին պատշաճ ծանուցման օր, տվյալ օրվանից սկսած հաշվել է 21 օր և նշել, որ վճարման կարգադրությունը ստացել է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>8</sup>-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>8</sup>-րդ հոդվածի համաձայն այն դեպքում, երբ պատասխանողի կողմից վճարման կարգադրության ստացման մասին հետադարձ ծանուցումը /տեղեկացումը/ ստանալու օրվանից հետո՝ երեք շաբաթվա ընթացքում, դատարանն առարկություն չի ստանում կամ ստանում է առարկություն, որը պատասխանողն ուղարկել է երկշաբաթյա ժամկետի խախտմամբ, ապա վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

*Օրինակ՝* դատարանը 23.02.2006թ. վճարման կարգադրություն է արձակել: Վճարման կարգադրությունը պատասխանողը ստացել է 18.03.2006թ., սակայն դատարանը պատասխանողի կողմից ծանուցագիրը ստանալուց 14 օր անց՝ 03.04.2006թ., դիմումատուին գրություն է ուղարկել այն մասին, որ վճարման կարգադրությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>8</sup>-րդ հոդվածի համաձայն օրինական ուժ է ստացել և կատարողական թերթ կտրվի դիմումատուի պահանջով՝ դիմումի հիման վրա:

**ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 10-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 10-րդ կետի համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>8</sup>-րդ հոդվածով սահմանված ժամկետում առարկություն չստանալու դեպքում, դատավորը նշում է կատարում արձակված վճարման կարգադրության օրինական ուժի մեջ մտնելու մասին:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ մի շարք վճարման կարգադրության վարույթներով օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունների վրա նշում կատարված չէ արձակված վճարման կարգադրության օրինական ուժի մեջ մտնելու մասին:

**ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 9.1-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 9.1-րդ կետի համաձայն դատավորի օգնականը ստացված գրավոր առարկության մասին զեկուցում է դատավորին, կատարում նշում վճարման կարգադրության վերացման մասին և մեկ օրվա ընթացքում ծանուցում դիմողին վճարման կարգադրության վերաբերյալ առարկություն ստանալու, վճարման կարգադրության վերացման և պահանջն ընդհանուր հայցային վարույթով ներկայացնելու նրա իրավունքի մասին:

*Օրինակ*՝ դատարանը 13.02.2006թ. վճարման կարգադրություն է արձակել: Պատասխանողը 17.02.2006թ. դատարանին ներկայացրել է առարկություն: Ստացված առարկությունը դիմումատուին ուղարկվել է 28.02.2006թ.:

**ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 10.1-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 10.1-րդ կետի համաձայն դատավորի օգնականը ծանուցում է ուղարկում դիմողին վճարման կարգադրության դեմ առարկություն չստացվելու և այն օրինական ուժի մեջ մտնելու մասին:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ առկա են վճարման կարգադրության վարույթներ, որոնցով վճարման կարգադրության դեմ առարկություն չստացվելու և այն օրինական ուժի մեջ մտնելու մասին դիմողին ծանուցում չի ուղարկվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36.1-րդ գլխի համաձայն՝ /«Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթ»/ նախատեսված չէ վճարման կարգադրության դիմումը վարույթ ընդունելու կարգ: Պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ դատարանը վճարման կարգադրության դիմումն ընդունել է վարույթ, այնուհետև նոր կատարել համապատասխան գործողություններ:

*Օրինակ՝* «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն 08.08.2006թ. դիմում է ներկայացրել դատարան՝ վճարման կարգադրություն արձակելու պահանջով: Դատարանը 10.08.2006թ. որոշում է կայացրել դիմումը վարույթ ընդունելու մասին և 18.08.2006թ. արձակել է վճարման կարգադրություն:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>5</sup>-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>5</sup> հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է դիմումը ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ձեռնարկել հետևյալ գործողություններից մեկը՝ արձակել վճարման կարգադրություն, ամբողջովին մերժել վճարման կարգադրություն արձակելու դիմումը, մասամբ մերժել վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը, իսկ մյուս մասով արձակել վճարման կարգադրություն:

*Օրինակ՝* Երևան քաղաքի ՊՍՏ բաժինը դիմում է ներկայացրել դատարան՝ վճարման կարգադրություն արձակելու պահանջով: Դիմումը դատարան մուտքագրվել է 27.01.2006թ., սակայն դատարանի կողմից վճարման կարգադրությունն արձակվել է 05.06.2006թ.: Սույն վարույթով վճարման կարգադրությունն արձակվել է դատարանի կողմից այն ստանալուց չորս ամիս անց:

## **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Քաղաքացիական գործերով հայցի ապահովման կիրառման միջնորդությունների քննարկման վերաբերյալ դատական պրակտիկա**

## **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ, 97-րդ, 101-րդ և 102-րդ հոդվածներ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 87

որոշում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված.

### **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են մի շարք քաղաքացիական գործեր, որոնցով կիրառվել է հայցի ապահովում.

### **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կամ իր նախաձեռնությամբ, միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցները չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված մի շարք քաղաքացիական գործերով հայցվորները, դիմելով դատարան, միաժամանակ դատարանին խնդրել են հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողների գույքի և դրամական միջոցների վրա և դատարանի՝ առանձին ակտի տեսքով կայացված որոշումներով միջնորդությունները հիմնականում բավարարվել են և հայցագնի չափով արգելանք է դրվել պատասխանողների գույքի և դրամական միջոցների վրա, սակայն տվյալ գործերով չեն ներկայացվել պատշաճ ապացույցներ այն մասին, որ հայցի ապահովման միջոցներ չկիրառելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը: Ներկայացվել են միայն ապացույցներ այն մասին, թե պատասխանողի պարտքն ինչպիսի պարտավորությունների կամ պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով է առաջացել:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով «Հայմամուլ» ՓԲԸ-ն հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Բ.Բագունցի՝ 245.502 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է

հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանի 02.05.2006թ. որոշմամբ միջնորդությունը բավարարվել է և հայցագնի չափով արգելանք է դրվել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է նաև, որ առկա են քաղաքացիական գործեր, որոնցով դատարանն ուշադրություն է դարձրել բռնագանձվող գումարի չափին և հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը նույն փաստական հանգամանքների պայմաններում մերժել է:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով «Հայմամուլ» ՓԲԸ-ն հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Ա. Մանուկյանի՝ 56.740 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանի 06.03.2006թ. որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

### **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ միջնորդությունը քննարկվում է այն ստացվելու օրը և կայացվում է որոշում:

*Օրինակ* «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Մ. Ստեփանյանի՝ գումարի բռնագանձման պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանը 28.11.2005թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, իսկ հայցի ապահովման մասին որոշումը կայացրել է 29.11.2005թ.:

*Մեկ այլ* քաղաքացիական գործով «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ա. Գալստյանի՝ գումարի բռնագանձման պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա, սակայն գործում առկա չէ որևէ որոշում հայցվորի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դատարանը *պատասխանողին* պատշաճ ձևով ուղարկում է հայցադիմումի և նրան կից փաստաթղթերի պատճենները: Այն դեպքում, երբ հայցադիմումը ներկայացնելու հետ միաժամանակ հայցվորը միջնորդություն է ներկայացնում հայցի կամ ապացույցների ապահովման պահանջով, և դատարանը բավարարում է այդ միջնորդությունը, ապա հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները դատարանի որոշումը կատարելուց հետո անհապաղ ուղարկվում են պատասխանողին:

*Օրինակ*՝ քաղաքացիական գործով Ս. Մարտիրոսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ա. Ղուկասյանի՝ գումարի բռնագանձման պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանի 15.02.2006թ. որոշմամբ միջնորդությունը բավարարվել է և հայցագնի չափով արգելանք է դրվել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանը նույն օրը որոշումն ուղարկել է հայցվորին և *պատասխանողին*, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 87 որոշման կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, ձեռնարկելով հայցի ապահովման միջոցներ, կարող է պատասխանողի միջնորդությամբ հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրելու ապահովում՝ պատասխանողի հնարավոր վնասների հատուցման համար: Այդ պահանջը չկատարելու դեպքում հայցի ապահովման մասին որոշումը ենթակա է վերացման:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006թ. թիվ 87 որոշման համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի

կիրառման ժամանակ հայցվորից հակընդդեմ ապահովում պահանջելիս անհրաժեշտ է հիմք ընդունել նման միջնորդության հիմնավորվածությունը և ներկայացված ապացույցները: Հնարավոր վնասների ապահովման համար գումարի չափը որոշելիս պետք է գնահատել միայն ներկայացված ապացույցներով հիմնավորվող հնարավոր վնասի չափի առկայությունը:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Ց. Մալխասյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ս. Ժատրոսյանի, Վ. Ալեքսանյանի, Մ. Պապոյանի, Վ. Օսիպյանի՝ օրենքին հակասող պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Դատարանը 16.03.2006թ. որոշում է կայացրել հայցի ապահովման կիրառման մասին, որով արգելանք է դրվել բնակարանի, այնտեղ գտնվող 36,04 քմ մակերեսով առևտրի սրահի վրա:

Պատասխանող Վ. Ալեքսանյանը 05.05.2006թ. միջնորդություն է ներկայացրել դատարան, որով խնդրել է եռօրյա ժամկետում հայցվորից որպես հնարավոր վնասների հատուցում, ապահովում տրամադրել 3.000.000 ՀՀ դրամի չափով, քանի որ հայցի ապահովմամբ կրում է նյութական վնասներ, մասնավորապես՝ չի կարողացել գրավադրել վերոհիշյալ գույքը, որի հետևանքով չի իրագործվել իրենց կողմից կազմված բիզնես ծրագիրը, որի չիրագործվելու հետևանքով կրել է նյութական վնասներ: Դատարանի որոշմամբ միջնորդությունը մերժվել է՝ պատասխանողի կողմից միջնորդությունը հիմնավորող որևէ ապացույց չներկայացնելու հիմքով:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման դատական պրակտիկան.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ հայցը մերժելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելու դեպքում ևս պատասխանողները միջնորդություն են ներկայացրել կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու խնդրանքով, այն դեպքում, երբ համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝ հայցը թողնվել է առանց քննության կամ մերժվել է:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Ա. Սարգսյանի ընդդեմ Ս. Պողոսյանի, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման՝ Երևանի քաղաքապետի 22.04.05թ. որոշումը, ավտոտնակի նկատմամբ Ս. Պողոսյանի անվամբ գրանցված սեփականության վկայագիրը և 17,2 քմ հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքն անվավեր ճանաչելու պահանջների մասին, դատարանը 28.03.2006թ. որոշում է կայացրել հայցի ապահովման մասին: Դատարանի 19.07.2006թ. վճռով հայցը մերժվել է: Հայցվորի ներկայացուցիչը վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 08.11.2006թ. վճռով նույնպես հայցը մերժվել է: Պատասխանող Ս. Պողոսյանը միջնորդությամբ խնդրել է վերացնել 28.03.2006թ. կիրառված հայցի ապահովման միջոցը՝ արգելանքից հանել իրեն սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը: Դատարանի 15.12.2006թ. որոշմամբ միջնորդությունը բավարարվել է:

**Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքներով առկա է հայցն առանց քննության թողնելու դեպքում հայցի ապահովման վերացման հետևյալ դատական պրակտիկան.**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝ հայցը թողնվել է առանց քննության կամ մերժվել է:

Դատական պրակտիկայի ամփոփման արդյունքում պարզվել է, որ հայցն առանց քննության թողնելու դեպքում հայցի ապահովման վերացման վերաբերյալ դատարանների մոտեցումները տարբեր են:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով հայցվորը դիմել է դատարան ընդդեմ Պ. Պողոսյանի՝ գումարի բռնագանձման պահանջով: Դիմելով դատարան՝ հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանը 28.11.2005թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Դատարանը 29.12.2005թ. որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին: Որոշում կայացնելիս դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին կետով:

Որոշման եզրափակիչ մասում նշվել է. «հայցի ապահովման միջոցը պահպանել՝ մինչև որոշման օրինական ուժի մեջ մտնելը»: Մինչև առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելը՝ դատարանը 09.12.2005թ. ստացել է կատարողական վարույթ հարուցելու և պատասխանողի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումները, սակայն 29.12.2005թ. որոշումը՝ հայցն առանց քննության թողնելու մասին, ԴԱՀԿ չի ուղարկվել: Հայցվորը 10.01.2006թ. դիմել է դատարան քաղաքացիական գործի քննությունը վերսկսելու պահանջով: 11.01.2006թ. դատարանը որոշում է կայացրել առանց քննության թողնելու մասին որոշումը վերացնելու մասին: Դատարանն իր 03.02.2006թ. վճռով հացվորի պահանջը բավարարել է: Դատարանի վճռի եզրափակիչ մասում նշված է. «Հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը», սակայն տվյալ դեպքում հարց է առաջանում, եթե հայցվորը կրկին անգամ չի միջնորդել հայցի ապահովում կիրառելու մասին, ապա դատարանն ինչ հայցի ապահովման միջոցի մասին է նշում կատարել վճռի եզրափակիչ մասում, չէ որ դատարանի 29.12.2005թ. որոշմամբ նշված էր, որ հայցի ապահովումը պահպանել մինչև որոշման օրինական ուժի մեջ մտնելը, իսկ տվյալ որոշումը 01.01.2006թ. արդեն ստացել է օրինական ուժ /ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144<sup>1</sup> հոդվածով սահմանված կարգով չի բողոքարկվել/ և կիրառված հայցի ապահովումը վերացել է դատարանի որոշմամբ:

*Հասկանչական է այն փաստը, որ մեկ այլ քաղաքացիական գործով* հայցվորը միաժամանակ միջնորդել է կիրառել հայցի ապահովում, որը դատարանի որոշմամբ բավարարվել է: Այնուհետև, դատարանը որոշում է կայացրել հայցադիմումն առանց քննության թողնելու մասին /դեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 103-րդ հոդվածի 1-ին կետով/, սակայն որոշման եզրափակիչ մասում որևէ նշում չկա հայցի ապահովումը պահպանելու մասին: Հայցվորը դիմել է գործի վարույթը վերսկսելու խնդրանքով, դատարանի կողմից որոշում է կայացվել առանց քննության թողնելու մասին որոշումը վերացնելու մասին: Դատարանը վճռով հայցը բավարարել է և վճռով անդրադարձել է հայցի ապահովմանը և նշել, որ հայցի ապահովումը պահպանել մինչև վճռի կատարումը:

*Առկա է նաև մեկ այլ քաղաքացիական գործ, որով* ևս հայցվորը միաժամանակ դատարանին խնդրել է հայցի ապահովման նպատակով արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական շրջանառու միջոցների վրա: Դատարանի

02.12.2006թ. որոշմամբ միջնորդությունը բավարարվել և հայցագնի չափով արգելանք է դրվել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա:

Սույն գործով դատարանի 29.12.2005թ. որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության: Որոշում կայացնելիս դատարանը չի անդրադարձել հայցի ապահովման պահպանմանը, սակայն 07.03.2006թ. առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելիս դատարանն անդրադարձել է հայցի ապահովման պահպանմանը և որոշման պատճառաբանական մասում նշել է. «... դատարանը գտնում է, որ 2005թ. դեկտեմբերի 2-ի սույն դատարանի որոշմամբ կայացված հայցի ապահովումը պետք է վերացնել և արգելանքից հանել Սարգիս Քոչարյանին պատկանող գույքը և դրամական շրջանառու միջոցները», ինչպես նաև որոշման եզրափակիչ մասում նույնպես նշված է. «Որոշման օրինական ուժի մեջ մտնելուց հետո Սարգիս Քոչարյանին պատկանող գույքը և դրամական շրջանառու միջոցները արգելանքից հանել»: Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե ինչու հայցի ապահովմանը 29.12.2005թ. որոշմամբ չի անդրադարձել, այլ անդրադարձել է 07.03.2006թ. որոշմամբ:

### **1. Ուսումնասիրության ոլորտը**

**Քաղաքացիական գործերով դատաքննության ժամկետների պահպանման վերաբերյալ դատական պրակտիկա.**

### **2. Օրենսդրական կարգավորումը**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդված, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 13.06.2006թ. թիվ 98 որոշում.

### **3. Վիճակագրական տվյալները**

Սույն թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է 35187 քաղաքացիական գործեր.

### **4. Իրավական նորմերի կիրառման դատական պրակտիկան**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկան.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածը, սահմանում է, որ գործը պետք է քննվի և վճիռ կայացվի դատարանի կողմից հայցադիմումն ընդունելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 13.06.2006թ. թիվ 98 որոշման 1-ին կետի համաձայն՝ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Քաղաքացիական գործերով, մասնավորապես, գործի քննությունը պետք է ավարտվի մեկ դատական նիստի ընթացքում, եթե չկան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերը՝ գործի քննությունը հետաձգելու համար: Նույն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ գործի քննության ժամկետները որոշելիս քաղաքացիական գործի քննության ժամկետի սկիզբ պետք է համարել այն պահը, երբ առաջին անգամ դատարանը հայցը կամ դիմումն ընդունել է վարույթ:

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Երևանի «Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ մասնաճյուղը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Գ. Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Դատարանի 05.12.2005թ. որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և դատական նիստը նշանակվել է 18.01.2006թ.-ին: 18.01.2006թ. նշանակված դատական նիստը հետաձգվել է պատասխանողի չներկայանալու պատճառով և նշանակվել է 02.02.2006թ.-ին: 02.02.2006թ. դատական նիստը կրկին անգամ հետաձգվել է պատասխանողի չներկայանալու պատճառով և նշանակվել է 20.02.2006թ.-ին: 20.02.2006թ. կողմերը ներկայացել են և նույն օրը դատարանը վճիռ է կայացրել հայցը բավարարելու մասին:

*Դատական պրակտիկայի արդյունքում պարզվել է, որ առկա են քաղաքացիական գործեր, որոնցով դատարանը դիմումը ստանալուց հետո վարույթ ընդունելու մասին որոշմամբ դատական նիստի օրը նշանակել է արդեն իսկ երկամսյա ժամկետից ուշ:*

*Օրինակ՝* քաղաքացիական գործով Երևանի քաղաքապետարանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Հ. Բաղայանի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, անշարժ գույքի սեփականության և վարձակալության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Դատարանի 25.07.2005թ. որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և

դատաքննությունը նշանակվել է 26.10.2006թ-ին, նույն օրը հայցը թողնվել է առանց քննության:

**Դատական պրակտիկայի ամփոփման  
վարչության պետ**

**Կարեն Փոլադյան**